



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 ապրիլի 2025 թվականի թիվ 45-Ա

ք. Երևան

«ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2025 թվականի մարտի 31-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 9 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) պարզեց.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի մարտի 27-ին, 28-ին և 31-ին իրականացրել է «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից հեռարձակվող «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում զետեղված տեսանյութերի մշտադիտարկում և հայտնաբերել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջների խախտման առերևույթ հատկանիշներ:

Արդյունքում, 2025 թվականի մարտի 31-ին Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից կազմվել է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 31-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի մարտի 31-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 9 վարչական վարույթը:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից փաստական հանգամանքները պարզելու նպատակով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, 17.03.2025 թվականին գրություն է ուղղվել (Ե/03/03.1/229-25) «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲ և «ԹԻՄ» ՓԲ ընկերությունների տնօրեն Հայկ Եսայանին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն իրենց ցանցում այդ պահին «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ

ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը փաստացի վերահաղորդելու վերաբերյալ:

Ի պատասխան՝ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունից ստացվել է 21.03.2025 թվականի թիվ 06/25 գրությունն այն մասին, որ «(...) «ՍԿԻՉԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով այս պահի դրությամբ վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GIG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max):»:

Այսպես, ըստ Արձանագրության՝

2025 թվականի մարտի 12-ի թիվ Ե/01/03.1/212-25 և 2025 թվականի մարտի 24-ի թիվ Ե/01/03.1/247-25 գրություններով Հանձնաժողովը «ՍԿԻՉԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությունից պահանջել է «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի տարբեր ժամանակահատվածների ձայնագրությունները:

Մասնավորապես՝

2025 թվականի մարտի 12-ի թիվ Ե/01/03.1/212-25 գրությամբ պահանջել է մինչև 2025 թվականի մարտի 17-ը Հանձնաժողով ներկայացնել 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրություն:

2025 թվականի մարտի 24-ի թիվ Ե/01/03.1/247-25 գրությամբ, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասը, Հանձնաժողովը պահանջել է մինչև մարտի 28-ը ներկայացնել մարտի 15-ից մարտի 23-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Ընկերությունն ի պատասխան հայտնել է, որ բոլոր եթերները զետեղված են լրատվամիջոցի յուրօրյան էջում և տրամադրել է հետևյալ՝ <http://www.youtube.com/@1inTVArmenia/streams> յուրօրյան էջի հղումը:

Նշված էջում զետեղված տեսանյութերի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ գրեթե բոլոր տեսանյութերը պարունակում են «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի Գյումրու քաղաքապետի թեկնածու Լևոն Բարսեղյանի նախընտրական քարոզչության տեսահոլովակը, ինչպես նաև մշտադիտարկված հաղորդումներում հյուրերը կամ «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչներ են, կամ գովաբանում և աջակցում են այդ նույն՝ «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքին:

Վերոնշյալը պարունակում է Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի խախտման հարկանիշներ:

Ըստ վերը նշված օրենքների պահանջների՝ Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ տեսալսողական հաղորդումները պետք է հեռարձակվեն ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան:

Նաև՝ Ընտրությունների ժամանակ հանրային հեռարձակողների կողմից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովել ոչ խտրական պայմաններ: Լրատվական հաղորդումներում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության վերաբերյալ ներկայացնել անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Ընտրություններին մասնակցող

կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և թեկնածուների վերաբերյալ նախընտրական քարոզչության հետ չկապված հրապարակումները պետք է լինեն առավելագույնը չեզոք:

Եվ սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաև թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս տեսալսողական մեդիածառայություն մատուցողների վրա՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս բոլոր հեռարձակողների վրա:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 02-ի թիվ Ե/04/04.1/286-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 11.04.2025 թվականին ներկայացրել է պարզաբանում Հանձնաժողովում հարուցված մեկ այլ՝ թիվ 10 վարչական վարույթի շրջանակում, որն անուղղակի փոխկապակցված է թիվ 9 վարչական վարույթի հետ:

Մասնավորապես պարզաբանման մեջ նշված է, որ ի պատասխան Հանձնաժողովի գրություններին՝ Ընկերությունը ներկայացրել է յուրօրյան էջի հղումը, որը և պարունակել է Հանձնաժողովի պահանջված տեղեկատվությունը:

Հեռարձակողը բացատրություններում նշել է նաև, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերության պատասխանի հետ կապված տեղի է ունեցել թյուրըմբռնում: Խոսքը վերաբերում է 17.03.2025 թվականի Հանձնաժողովի գրությանը՝ այդ պահի դրությամբ «ԱՌԱԶԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի վերահաղորդման վերաբերյալ:

Ընկերությունը հայտնել է, որ քանի որ պարզաբանման պահանջ չի եղել, տեղեկատվություն չի տրամադրվել առ այն, որ տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունը ապրանքային նշանով կարմիր էկրանն է:

Ընկերությունն ի հավաստիք ներկայացրել է նաև 07.04.2025 թվականի «ԹԻՄ» ՓԲ ընկերության տրամադրած պարզաբանումը, որտեղ մասնավորապես նշվում է, որ համաձայն «ԹԻՄ» ՓԲԸ և «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ միջև 01.02.2021 թվականի կնքված պայմանագրի՝ «ԱՌԱԶԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով նշված ժամանակահատվածում վերահաղորդվել է ըստ ուղարկված բովանդակության և որ «ԹԻՄ» ՓԲԸ կողմից բովանդակության վերահսկում, դիտարկում կամ փոփոխություն չի իրականացվում: Գրության մեջ նշված է նաև, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը չունի վերահաղորդման դադարեցման մասին ծանուցում և տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է նաև այդ պահի դրությամբ:

Մինչույն ժամանակ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը գրությամբ արձանագրել է, որ այդ պահին (07.04.2025թ.) «ԱՌԱԶԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունն իրենց ապրանքային նշանով կարմիր էկրանն է:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ վերահաղորդում՝ այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ պահպանելով լուսաբանման համար հավասար հնարավորություններ ապահովող Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված կարգերը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ լիցենզիան կարգավորող պետական մարմնի տրամադրած փաստաթուղթ է, որը թույլ է տալիս՝ ցանցային օպերատորին վերահաղորդել Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողների և օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ սույն օրենքով և օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝

«Ընտրությունների ժամանակ հանրային հեռարձակողները պարտավոր են թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական պայմաններ:

Հանրային հեռարձակողների լրատվական հաղորդումներում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ ներկայացվում է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների վերաբերյալ նախընտրական քարոզչության հետ չկապված հրապարակումները պետք է լինեն առավելագույնը չեզոք:

Թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչություն չիրականացնելը զանգվածային լրատվության միջոցի համար հիմք չէ տվյալ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության մասին տեղեկություններ չհրապարակելու համար:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կնքած՝ նախընտրական քարոզչության նպատակով եթեր տրամադրելու պայմանագրերը համարվում են ուժը կորցրած, և դադարեցվում է նախընտրական քարոզչության նպատակով եթերի տրամադրումը:»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության սահմանման համաձայն՝

«Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաև թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար

Եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների վրա՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս բոլոր հեռարձակողների վրա:»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումները հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը»:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) 5-րդ կետը, ի թիվս այլնի, սահմանում է.

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրական օրենսդրության պահանջների ապահովման նպատակով Հեռարձակողներն իրենց տեսալսողական հաղորդումներում պետք է ապահովեն.

3) կարծիքների անաչառությունը, կշռադատվածությունը և հակառակ տեսակետների ներկայացումը:»:

Մեթոդաբանության 7-րդ կետի համաձայն՝

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից ընտրական օրենսդրության պահանջների համապատասխանության մշտադիտարկման արդյունքում գնահատվում է՝

7) լրատվական թողարկումներում և քաղաքական հաղորդումներում ընտրությունների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման գնահատականներից զերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.

9) Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական հաղորդումներում և հաղորդաշարերում մասնակցության հավասար հնարավորություն ընձեռելու հանգամանքը:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել օրենքների կարգավորող դրույթները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2020 թվականի հոկտեմբերի 19-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցող (Հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 033, Որոշման ամսաթիվը՝ 19.10.2020թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները՝ Ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ տեսալսողական հաղորդումները հեռարձակել ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրություններն ու պարզաբանումները, նաև ներկայացված ապացույցները.

Իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրում ենք հետևյալը.

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից 27.02.2025 թվականին և 12.03.2025 թվականին գրություններ են ուղղվել «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությանը՝ խնդրելով տրամադրել «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի փետրվարի 10-ից 25-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունները:

Հանձնաժողովը 12.03.2025 թվականի գրությամբ խնդրել է նաև հայտնել տեղեկատվություն, թե որ ցանցային օպերատորների միջոցով է վերահաղորդվում «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը:

Ընկերությունը նշված գրություններին պատասխանել է 12.03.2025 թվականի էլեկտրոնային նամակով և գրությամբ՝ ներկայացնելով յուրօրյան էջի հղումը, ըստ որի Հանձնաժողովը կարող է իրականացնել ուսումնասիրություն և տեղեկացնելով, որ «(...) 1in.am-ը վերահաղորդվում է Team ցանցային օպերատորով:»:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի՝ վարչական մարմինը պարտավոր է բազմակողմանիորեն գնահատել բոլոր փաստերը և ապացույցները, այդ թվում՝ ձեռք բերված արտաքին աղբյուրներից:

Հետևաբար Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից փաստական հանգամանքները պարզելու համար 17.03.2025 թվականին գրություն է ուղղվել (թիվ Ե/03/03.1/229-25) «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲ և «ԹԻՄ» ՓԲ ընկերությունների տնօրեն Հայկ Եսայանին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն իրենց ցանցում այդ պահին «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը փաստացի վերահաղորդելու վերաբերյալ:

Ի պատասխան՝ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը 21.03.2025 թվականի թիվ 06/25 գրությամբ պատասխանել է Հանձնաժողովի հարցին և հաստատել, որ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով այդ պահի դրությամբ վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GIG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max):

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից 24.03.2025 թվականին կրկին գրություն է ուղղվել Ընկերությանը՝ կրկին խնդրելով ներկայացնել 2025 թվականի մարտի 15-ից մինչև 23-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Արդեն 24.03.2025 թվականի Հանձնաժողովի գրությանը Հեռարձակողը պատասխանել է, որ Առաջին լրատվականն աշխատում է ուղիղ եթերի ձևաչափով, բոլոր եթերները զետեղված են լրատվամիջոցի յուրօրյան էջում և նաև տեղեկացրել է, որ սույն թվականի մարտի սկզբից առ այդ օրը (ենթադրաբար գրության պատասխանի՝ 27.03.2025թ. օրը, քանի որ նշված չէ ստույգ ամսաթիվ) 1inTV-ն չի հեռարձակվել որևէ ցանցային օպերատորի միջոցով տեխնիկական խնդրի պատճառով, որն ըստ ամենայնի կլուծվի հաջորդ ամսվա ընթացքում:

Այսպես, Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի մարտի 27-ին, 28-ին և 31-ին իրականացրել է «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության կողմից տրամադրված «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում զետեղված տեսանյութերի մշտադիտարկում և հայտնաբերել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջների խախտման առերևույթ հատկանիշներ և կազմել մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ Արձանագրությունը:

Հիմք ընդունելով 31.03.2025 թվականի Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Հանձնաժողովը 31.03.2025 թվականին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և 02.04.2025 թվականի գրությամբ ծանուցել վարչական վարույթի հարուցման և պարզաբանում ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերությունը Հանձնաժողովի 02.04.2025 թվականի ծանուցմանն ի պատասխան ներկայացրել է նոր պարզաբանում՝ մասնավորապես կրկին նշելով, որ իրենց կազմակերպությունն աշխատում է ուղիղ եթերի ձևաչափով, և բոլոր եթերները զետեղված են լրատվամիջոցի յուրօրյան էջում, որն էլ ներկայացվել է:

Ընկերությունը նաև հայտնել է, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերության պատասխանի հետ կապված տեղի է ունեցել տերմինաբանական շփոթ՝ թյուրըմբռնում, և քանի որ պարզաբանման պահանջ չի եղել, տեղեկատվություն չի տրամադրվել առ այն, որ տեսալսողական ծրագրով վերահսկվող բովանդակությունը ապրանքային նշանով կարմիր էկրանն է: Ընկերությունն ի հավաստիք ներկայացրել է նաև 07.04.2025 թվականի «ԹԻՄ» ՓԲ ընկերության տրամադրած պարզաբանումը, որտեղ մասնավորապես նշվում է, որ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով նշված ժամանակահատվածում վերահաղորդվել է ըստ ուղարկված բովանդակության (անկախ բովանդակության ակտիվ կամ պասիվ լինելու հանգամանքից), և որ «ԹԻՄ» ՓԲԸ կողմից բովանդակության վերահսկում, դիտարկում կամ փոփոխություն չի իրականացվում: Գրության մեջ նշված է նաև, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը չունի վերահաղորդման դադարեցման մասին ծանուցում: Նաև հայտնել է, որ այդ պահին (07.04.2025թ.) տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունը իրենց ապրանքային նշանով կարմիր էկրանն է:

Եվ այսպես, Հանձնաժողովը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստերն ու ապացույցները, հիմք ընդունելով օրենքների դրույթները, արձանագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական

մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Այսպես, Հանձնաժողովը, ղեկավարվելով վերը նշված օրենքների դրույթներով և հիմք ընդունելով վարչական վարույթի շրջանակում ձեռք բերված ապացույցները և ուսումնասիրելով բոլոր փաստարկները, արձանագրում է, որ Հեռարձակողի «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրում զետեղված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածի տեսանյութերում առկա է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների խախտման փաստ:

Հեռարձակողի կողմից արդեն 11.04.2025 թվականին ներկայացված պարզաբանումը և «ԹԻՄ» ՓԲԸ 07.04.2025 թվականի գրությունը չեն կարող հիմք հանդիսանալ ապացուցելու, որ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով չի վերահաղորդվել: Հանձնաժողովը չի տիրապետում այն գրության բովանդակությանը և հարցմանը, որով Ընկերությունը դիմել է «ԹԻՄ» ՓԲԸ-ին: Այսինքն՝ վերը նշված գրությունից պարզ չէ, թե կոնկրետ ինչ հարցադրումներին է պատասխանում «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը:

Ավելին, «ԹԻՄ» ՓԲ ընկերության գրությամբ արձանագրվում է միայն այն, որ այդ պահի դրությամբ՝ 07.04.2025թ.-ին, «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունը ապրանքային նշանով կարմիր էկրանն է:

Ի հակառակ Հեռարձակողի պնդմանը՝ Հանձնաժողովը տիրապետում է «ԹԻՄ» ՓԲ ընկերության հստակ պատասխանին, որով հաստատվում է, որ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով և վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GIG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max):

Ըստ «ԹԻՄ» ՓԲԸ գրության՝ պարզ է դառնում, որ Հեռարձակողը չի ներկայացրել վերահաղորդումը դադարեցնելու մասին ծանուցում, և նշված ժամանակահատվածում այն վերահաղորդվել է ըստ ուղարկված բովանդակության: Հանձնաժողովն այս ժամանակահատվածում չի ստացել նաև «ԹԻՄ» ՓԲ ընկերության ծանուցումը իր ցանցում Հեռարձակողի որևէ բովանդակության դադարեցման մասին:

Հետևաբար արձանագրում ենք, որ ողջ նախորդիվ նշվածը զայիս է ապացուցելու միայն այն, որ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով վերահաղորդվում է:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածը՝ արձանագրում ենք, որ վարչական վարույթի շրջանակում միայն վարչական մարմինն է գնահատում առկա ապացույցների համակցությունը և որոշում դրանց արժանահավատությունը:

Այդ թվում՝ եթե կան հակասող ցուցմունքներ կամ տեղեկություններ, վարչական մարմինը համադրում է դրանք և նախապատվությունը տալիս առավել հավաստի, պաշտոնական կամ երրորդ կողմի աղբյուրից ստացված տվյալներին, ինչպիսին է Հանձնաժողովի կողմից ցանցային օպերատորին ուղղված թիվ Ե/03/03.1/229-25 գրությունը և ի պատասխան ստացված «ԹԻՄ» ՓԲ ընկերության 21.03.2025 թվականի թիվ 06/25 գրությունը:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը 2020 թվականի հուլիսի 14-ից (սփյունյան տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն) Հանձնաժողովի կողմից տրամադրած ԿՀ N 281 լիցենզիայի հիման վրա իրավունք է ստացել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացնել ցանցային օպերատորի գործունեություն՝ վերահաղորդելով այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տրամադրված տեսալսողական ծրագրերը:

Օրենքի տրամաբանությունից հասկանում ենք, որ վերահաղորդումն իր մեջ ներառում է ձայնագրված և (կամ) տեսագրված տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը:

Ցանցային օպերատորը, հանդիսանալով Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով լիցենզավորված անձ և լիազորված վերահաղորդելու ինչպես Հայաստանի Հանրապետությունում գործող, այնպես էլ օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, պարտավոր է պատշաճ տիրապետել «վերահաղորդման» իրավական սահմանման բովանդակությանը: Հետևաբար ցանցային օպերատորը չէր կարող միայն ապրանքային նշանով կարմիր էկրանի հեռարձակումը դիտարկել որպես տեսալսողական ծրագիր՝ վերահաղորդման ենթակա: Ուստի Հեռարձակողի այն պարզաբանումը, թե ցանցային օպերատորի կողմից փաստացի իրականացվում է միայն ապրանքային նշանով կարմիր էկրանի հեռարձակում և տեղի է ունեցել «տերմինաբանական շփոթ», չի կարող համարվել հիմնավորված:

Ավելին, Հեռարձակողը չունի իրավասություն իրավական գնահատական տալու ցանցային օպերատորի գործունեությանը: Հեռարձակողի կողմից տրվող նման «գնահատականը» կարող է դիտարկվել որպես սուբյեկտիվ կարծիք կամ մեկնաբանություն, բայց ոչ իրավաբանորեն պարտադիր հետևանք ունեցող դիրքորոշում:

Հանձնաժողովի 28.04.2025 թվականի կայացած վարչական վարույթի լսումների ընթացքում Հեռարձակողի ներկայացուցիչ Տ. Եգորյանը վերահաստատել է վարչական վարույթի շրջանակում գրությամբ ներկայացված պարզաբանումները՝ միաժամանակ հայտնելով, որ Հեռարձակողը ՀՀ Ծիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածի համար հրապարակային օֆերտա է տեղադրել իր կայքէջում, որին, ըստ ներկայացուցչի, որևէ քաղաքական ուժ չի արձագանքել և հետևաբար, ըստ Հեռարձակողի, այն, ինչ տվյալ ժամանակահատվածում ցուցադրվել է «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրում, չի կարող համարվել նախընտրական քարոզարշավ:

Ըստ Հեռարձակողի ներկայացուցչի՝ սույն ժամանակահատվածում «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրում հանդես գալու համար ցանկություն է հայտնել միայն «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի Գյումրու քաղաքապետի թեկնածու Լևոն Բարսեղյանը:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում վերահաղորդվել է «ԹԻՄ» ՓԲ ընկերության կողմից, և այդ ժամանակահատվածում ծրագրում զետեղված գրեթե բոլոր տեսանյութերը պարունակել են միայն մեկ կուսակցությունների դաշինքի թեկնածուի նախընտրական քարոզչության տեսահոլովակ: «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի մշտադիտարկված հաղորդումներում հյուրերը ևս աջակցել, քարոզել և գովաբանել են նույն՝ «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի Գյումրու քաղաքապետի թեկնածու Լևոն Բարսեղյանին:

Հեռարձակողի կողմից չեն պահպանվել օրենքների դրույթները՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին չեն ընձեռնվել մասնակցության հավասար հնարավորություններ:

Ընտրական քարոզարշավի ընթացքում Հեռարձակողների կողմից ընտրողներին պետք է ներկայացվի լիարժեք տեղեկատվություն բոլոր թեկնածուների վերաբերյալ, և նույնիսկ այն քաղաքացիները, որոնք գուցե հանդիսանում են միայն մեկ տեսալսողական ծրագրի սպառող, պետք է հնարավորություն ունենան այդ ծրագրի միջոցով ստանալ ընդհանուր, ամբողջական պատկերացում ընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր մասնակից քաղաքական ուժերի և նրանց թեկնածուների վերաբերյալ:

Քննարկվող հարցի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ միջազգային փորձին: Այսպես, «Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը» վերտառությամբ Եվրոպայի խորհրդի ձեռնարկի համաձայն.

«Ընտրական քարոզարշավը ընտրողների կարծիքի ձևավորման համար առաջնային և առանցքային գործոնն է:»¹:

«(...) ընտրողների քվեի համար պայքարելիս, թեկնածուները և քաղաքական կուսակցությունները, մասնավորապես, պետք է ունենան գործելու հավասար պայմաններ, ինչպես նաև կարծիք ունենալու և արտահայտվելու ազատություն:»²:

«Ընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր քաղաքական ուժերը և թեկնածուները պետք է ունենան քաղաքական քարոզարշավում ներգրավվելու ազատություն և իրենց ծրագրերը ընտրազանգվածի շրջանում ազատ և հավասար պայմաններում տարածելու հնարավորություն (ԺՀՄԻԳ, 1966 թ. Հոդված 25-6, ԺԸԱՄԻ 2014ա, 214): Սա ենթադրում է քարոզարշավի համար հավասար ժամանակի տրամադրում և պետության կողմից թեկնածուներին հավասար վերաբերմունքի արժանացնելու իր պարտավորության կատարում՝ հաշվի առնելով թերներկայացված խմբերի հատուկ կարիքները և հիմնարար ազատությունների տրամադրումը, և, իհարկե, թեկնածուների՝ արդար վարքագիծ դրսևորելու հանձնառություն:»³:

«(...) պետությունները պետք է կանխեն լրատվամիջոցների ոչ պատշաճ գերիշխող դիրքը կամ կենտրոնացումը մասնավոր լրատվական խմբերի ձեռքում՝ մենաշնորհային այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են խոչընդոտել տեղեկատվական աղբյուրների և տեսակետների բազմազանության ապահովմանը (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, 1981-2014թթ., ԸՄ 34, պարբ. 40): Լրատվամիջոցների սեփականության ողջ ծավալը պետք է թափանցիկ լինի, ինչը հնարավորություն կտա քաղաքացիներին հասկանալ իրենց

¹ «Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը»//Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար/Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2016թ., Տպագրված է Եվրոպայի խորհրդի կողմից, 87 էջ: <https://rm.coe.int/using-international-election-standards-arm-final/1680712230> [8/4/2025]

² Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:

³ Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:

տեղեկատվական աղբյուրներում հանդիպող հնարավոր կանխակալ դիրքորոշումները (Նախարարների կոմիտե, 1994թ., Թիվ 1 ուղենիշ):»⁴:

Տվյալ պարագայում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և Հանձնաժողովի կողմից ընդունված Մեթոդաբանության հիմքում դրված են հենց այս պայմաններն ու իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ դրույթները:

Ձեռք բերված փաստերի արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության գրեթե բոլոր տեսանյութերը պարունակել են միայն մեկ՝ «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի Գյումրու քաղաքապետի թեկնածու Լևոն Բարսեղյանի նախընտրական քարոզչության տեսահոլովակը, իսկ մշտադիտարկված հաղորդումներում մասնակից հյուրերը նույնպես աջակցել և գովաբանել են «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի թեկնածուին, որի արդյունքում խախտվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պահանջները:

Հանձնաժողովը, անդրադառնալով նաև Հեռարձակողի ներկայացուցիչ Տ. Եգորյանի 28.04.2025 թվականի կայացած վարչական վարույթի լուսմների ընթացքում հնչեցրած այն պնդմանը, թե Հեռարձակողի կողմից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածի համար հրապարակային օֆերտա է տեղադրել իր կայքէջում, ապա սույն պնդումը չունի իրավական հիմնավորում: Ավելին, Հանձնաժողովի 21.02.2025 թվականի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված մեթոդաբանությամբ հստակ նախանշված են բոլոր պայմանները, որոնք պարտադիր են տեսալսողական մեդիայի բնագավառի սուբյեկտների համար նախընտրական շրջանում: Հատկանշական է, որ հաստատված մեթոդաբանությունը Հանձնաժողովի կողմից նախապես ներկայացվել է բոլոր Հեռարձակողներին: Սակայն «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությունում ինչ-ինչ պատճառներով այլ՝ յուրովի մոտեցում են ցուցաբերել օրենքների դրույթներով սահմանված պահանջներին:

Ավելին, ներկայացված հրապարակային օֆերտայի լուսապատճենի ուսումնասիրությունից պարզ չէ, թե ի վերջո ե՞րբ է այն հրապարակվել. առկա չէ հրապարակման օր, ամիս, տարեթիվ, որպիսի պարագայում Հանձնաժողովը չի կարող այն համարել պատշաճ հիմնավորում և ապացույց:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող

⁴ Տե՛ս նույն ձեռնարկի 109 էջ:

օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմինն գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ և 9-րդ մասերը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ մասերը, Հանձնաժողովի 21.02.2025 թվականի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված մեթոդաբանության 5-րդ և 7-րդ կետերը, և ղեկավարվելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք. Երևան